ՀՏԴ 331.015.14(479.243) Տնտեսագիտություն

ԱՇԽԱՏՈՒԺԻ ՇԱՐԺԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

Արմիդա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Բանալի բառեր՝ Աշխատանքային ռեսուրսներ, տնտեսապես ակտիվ բնակչություն, աշխատուժ, գենոֆոնդ, միգրացիա, արտագաղթ, օտարերկրյա աշխատուժ, ներքին և արտաքին միգրացիա, միգրանտ, նետտո-միգրացիա, դոնոր երկիր, կենսամակարդակ, զբաղվածություն, գործազրկություն:

Ключевые слова: трудовые ресурсы, экономически активное население, рабочая сила, генофонд, миграция, иностранная рабочая сила, внутренняя и внешняя миграция, мигрант, нетто-миграция, страна донор, страна реципиент, благосостояние, занятость, безработица.

Keywords: Working resources, economically active population, workforce, labor movement, gene pool, migration, foreign workers, internal and external migration, migrant, net-migrant, donor country, recipient country, standard of living, employment, unemployment.

Основные проблемы движения рабочей силы в НКР
А.Айрапетян

Данное исследование посвящено проблемам движения рабочей силы в НКР. Актуальность темы состоит в росте отрицательных последствий миграции рабочей силы. В статье подробно проанализировано нынешнее состояние рынка рабочей силы в НКР, движение рабочей силы, демографические последствия миграции, в частности, автор остановился на изучение таких показателей, как естественный рост населения, генофонд, рождаемость, разводы и какие последствия имела миграция для армянского народа. Чтобы предотвратить отрицательные последствия демографического характера движения рабочей силы, автор предлагает осуществление определенного комплекса мер; упорядочение деятельности рынка рабочей силы, разработка миграционной политики, обеспечение роста благосостояния населения.

The Main Issues of the Labor Movement in the NKR
A.Hayrapetyan

This research work is devoted to the problems of the labor movement in Nagorno-Karabakh Republic. The relevance of the subject lies in negative consequences of increasing volume of labor migration. The article analyzes the global image of labor movement in present-day world economy, the current situation in NKR labor market, unwanted effects of labor movement. In particular, the author stopped the study on indicators such as population growth, gene pool of human resources, employment, unemployment, birth, divorce and consequences of migration for the Armenian nation. In order to overcome the negative effects of demographic nature of labor movement it is offered by the author to implement a complex of certain measures, i.e. regulation of labor market activities, development of migration policy, provision of increase in living standards etc.

Տվյալ հետազոտությունը նվիրված է ԼՂՀ-ում աշխատուժի շարժի հիմնախնդիրներին: Թեմայի արդիականությունը կայանում է աշխատուժի միգրացիայի բացասական հետևանքների աճող ծավալների մեջ: Հոդվածում վերլուծության են ենթարկվել աշխատուժի շարժի ընդհանուր պատկերը արդի համաշխարհային տնտեսությունում, ԼՂՀ աշխատանքի շուկայի ներկա իրավիճակը, աշխատուժի շարժի անցանկալի հետևանքները:

Մասնավորապես հեղինակը կանգ է առել այնպիսի ցուցանիշների ուսումնասիրության վրա, ինչպիսիք են բնակչության բնական աճը, մարդկային ռեսուրսների գենոֆոնդը, զբաղվածությունը, գործազրկությունը, ծնելիությունը, ամուսնալուծությունը, և թե ինչպիսի հետևանքներ է ունեցել հայ ազգի համար արտագաղթը:

Աշխատուժի շարժի դեմոգրաֆիկ բնույթի բացասական հետևանքները հաղթահարելու համար հեղինակը առաջարկում է իրականացնել որոշակի միջոցառումների համալիր՝ աշխատանքի շուկայի գործունեության կարգավորումը, միգրացիոն քաղաքականության մշակումը, բնակչության կենսամակարդակի աճի ապահովումը և այլն:

Ցանկացած երկրի գլխավոր հարստությունը նրա աշխատանքային ռեսուրսներն են և այդ գլխավոր հարստության ակտիվության բարձրացման հիմնախնդիրը անխուսափելիորեն

պետք է դառնա պետության սոցիալ-տնտեսական ծրագրի ու գաղթի քաղաքականության կարևորագույն բաղադրամասը: Նման մոտեցումը բացատրվում է նախ նրանով, որ այդ նպատակով կատարված ցանկացած ներդրում փոխհատուցվում է արագորեն և դառնում նոր ներդրումների աղբյուր: Երկրորդ, դրանով իսկ հիմք է դրվում պետության հոգսերի հետագա թեթևացման, «քանզի մարդն իր աշխատանքով ստեղծում է ոչ միայն իր, այլև հասարակության համար՝ անվերապահորեն հարստացնելով պետական բյուջեն» : [1] Դրա հետ մեկտեղ յուրաքանչյուր անձ ունի ազատ տեղաշարժի և յուրաքանչյուր ոք ունի ցանկացած երկիր, այդ թվում նաև սեփականը, լքելու և իր երկիրը վերադառնալու իրավունքը:

Աշխատուժի շարժը (միգրացիան) իրենից ներկայացնում է բարդ սոցիալ-տնտեսական, ինչպես նաև կենսաբանական գործընթաց, որի ընթացքում փոփոխության են ենթարկվում աշխատուժի քանակական և որակական հատկանիշները: Պետական ծրագրերի շրջանակներում տեղի ունեցող աշխատուժի շարժը անհրաժեշտ է յուրաքանչյուր երկրի համար, քանի որ հնարավորություն է ընձեռում կիրառել այլ երկրի մասնագետների դրական փորձը ազգային տնտեսության զարգացման գործում: Սակայն երբ աշխատուժի միգրացիան գերազանցում է թույլատրելի սահմանները, ապա այդ երևույթի անցանկալի հետևանքները անխուսափելի են:

«Աշխատուժի միգրացիան աշխատունակ տարիքի բնակչության տեղաշարժն է՝ տնտեսական և սոցիալական վիճակի բարելավման նպատակով և հենց աշխատուժի շարժի ինտենսիվությունն ու մասշտաբները որոշում են զբաղվածության և գործազրկության պատկերը»[2]:

Մեր հանրապետության աշխատանքային ռեսուրսների ընդհանուր թվաքանակում տնտեսապես ակտիվ բնակչության կազմում տեղի ունեցած փոփոխությունները վկայում են վերջինիս աճի մասին: Եթե 2012թ. այդ ցուցանիշը կազմում էր 63.780 մարդ, ապա 2013թ. տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը կազմել է 64.987մարդ, այսինքն 1.207 մարդով ավելին էր և ուրախալի է, որ այդ աճը բացասական ձևով չի անդրադարձել գործազրկության մակարդակի վրա, դեռ ավելին, գործազրկության մակարդակը նվազել է 0.6%-ով՝ (4.6% -ից 2012թ. մինչև 4.0% -ը 2013թ.) [3]:

ԼՂՀ-ում 2013 թ. չզբաղված քաղաքացիների թիվը կազմել է 2 859 մարդ , որոնց 89.8%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Չզբաղված քաղաքացիների թվաքանակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 9.2%-ով:

Այսօր աշխատուժի շարժի զանգվածային բնույթը թույլ է տալիս միջազգային տնտեսական հարաբերություններում այն գնահատել որպես ժողովրդագրական և տնտեսական կայուն երևույթ, որը տարբեր գործոնների ազդեցությամբ փոխում է ինչպես աշխարհագրական ուղղությունները, այնպես էլ տեղաշարժի նպատակները: Ընդհանուր առմամբ, բնակչության տեղաշարժի վրա ազդում է գործոնների համալիր, որոնք և փոխկապված են, և այս կամ այն ժամանակաշրջանում էական դեր են խաղում միգրանտների տեղաշարժի նպատակների ձևավորման գործում: Դրանք են՝ քաղաքական, բարոյահոգեբանական, մշակույթային, կրոնական, էթնիկական գործոնները:

Միգրացիայի հետևանքով է հենց պայմանավորված այն փաստը, որ ներկայումս աշխարհի հայերի ընդհանուր թվաքանակի մեջ հարաբարականորեն նվազել է հայաստանաբնակ հայերի տեսակարար կշիռը:

---

[1] Վ.Ե. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին:, Երևան, 2001, էջ 132

[2] Экономика и социология труда. Юнита 1., М. 2000, էջ 66

[3] ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2007-2013 թթ., Ստեփանակերտ, 2014, էջ 32

«Տարբեր փորձագիտական հետազոտությունների համաձայն, վերջին 20 տարիներին Հայաստանից հեռացել և այլ երկրներում բնակություն են հաստատել 700 հազարից մեկ միլիոն 300 հազար մարդ, որը կազմում է 2010 թ. ՀՀ անվանական բնակչության 21 - 39%-ը»[1]:

Այժմ հայերի թիվը աշխարհում գերազանցում է 9 մլն.-ը, որից միայն մոտ 3.2մլն.-ն է ապրում մայր հայրենիքում, իսկ մեծ մասը՝ 6 մլն. աշխարհի ավելի քան 75 երկրներում[2]: Աշխատուժի արտագաղթը միշտ էլ տարբեր սոցիալ-տնտեսական հետևանքներ է ունեցել: ԼՂՀ կառավարության կողմից մշակված համապատասխան քաղաքականության շնորհիվ աշխատուժի ներգրավման խնդիրը կարծես թե կարելի էր համարել լուծված, սակայն վերջին տարիներին աշխատուժի շարժի դինամիկան բացահայտում է աշխատուժի արտագաղթի բացասական սոցիալ-տնտեսական հետևանքները:

Այսօր արդեն կասկած չկա, որ արտագաղթը ազդում է մեր հանրապետության բնակչության գենոֆոնդի վրա և դրա բացասական ազդեցությունը կզգացվի տարիներ հետո: Արտագաղթի հետևանքով կրճատվում է ոչ միայն բնակչության թվաքանակը,այլև նվազում է երեխաների ծնունդը և իջնում բնական աճը: Իսկ դա ազգային անվտանգության կարևոր հիմնախնդիրներից է:Արտագաղթողների մեծ մասը երիտասարդներն են, որոնք գրեթե չեն վերադառնում, նրանք ձուլվում են այլ ազգերի և ազգությունների հետ:

Ըստ վիճակագրական տվյալների ԼՂՀ-ում 2013 թ. ծնվածների թիվը 2012թ. համեմատ նվազել է 5.2%-ով՝ կազմելով 2371 մարդ (2012թ.-ին այն կազմել է 2500 մարդ), իսկ մահացածների թիվը աճել է 9.1% -ով՝ կազմելով 1344 մարդ (2012թ.-ին այն կազմել է 1232 մարդ) : Ճիշտ է 2013 թ. ծնվածների թվաքանակը 1.8 անգամ գերազանցել է մահացության տեմպերը, սակայն անհնգստացնող է այն փաստը, որ գնալով ծնվածների թիվը նվազում է, իսկ մահացածների թիվը՝ աճում: Եվ եթե նույնիսկ 2013թ. բնակչության աճը դրական է և կազմել է 1027 մարդ, այն նախորդ տարվա համեմատ նվազել է 19% -ով, կամ 241 մարդով: Իսկ մահացությունների ընդհանուր թվում ամենամեծ տեսակարար կշիռը մինչև 70 տարեկան բնակիչների թիվն է կազմում՝ 30.5% (409 մարդ), 2012թ.-ին այն կազմել է 27,0 % (336 մարդ):

Հանրապետությունում կրճատվում է ընտանիքի անդամների թիվը, ինչը լուրջ մտահոգության առիթ է տալիս: Երեք և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների քիվը նվազում է. եթե 2009թ. նման ընտանիքների քիվը 496, ապա 2013թ. այս ցուցանիշը նվազեց մինչև 426: Հանրապետությունում ոչ միայն նվազում է ընտանիքի միջին մեծությունը, այլև ընտանիքը ավելի անկայուն է դառնում: Վերջին հինգ տարիների ընթացքում ամուսնալուծությունների քանակը 2013թ. ամենաբարձրն էր, միայն համեմատելու նպատակով նշենք, որ այս ցուցանիշը 2009թ. կազմել էր 106 (1000 բնակչի հաշվով), իսկ 2013թ. այն արդեն կազմում էր 192 (1000 բնակչի հաշվով):[3]

Սոցիալ-տնտեսական ցուցանիշների վերլուծությունը հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ աշխատավարձի բարձրացումը, կենսամակարդակի աճը, գործազրկության նվազումը, ՀՆԱ-ի աճը մեկ շնչի հաշվով պետք է որ զգալի բարելավեն մեր կյանքը (ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2013 թ. կազմել է 1 137.9 հազ.դրամ կամ 2 777.9 ԱՄՆ դոլար, իսկ 2012թ.՝ 1 023.0 հազ. դրամ կամ 2 546.1 ԱՄՆ դոլար) և որոշակի լուծեն արտագաղթի խնդիրը:

Վերաբնակեցման ծրագրի շրջանակներում ԼՂՀ-ի կառավարությունը միայն 2012թ-նին ԼՂՀ տարածք տեղափոխված ընտանիքների համար օրենսդրությամբ սահմանված արտոնությունների տրամադրման նպատակով հատկացրել է 42 136.0 հազար դրամ, իսկ

---

[1] Վ.Ե. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին: Երևան, 2001. էջ 308

[2] Ս.Ա. Մելքումյան «Հայաստանի հանրապետության և Լեռնային Ղարաբաղի հանրապետության տնտեսական աշխարհագրություն» Երևան, 2000. էջ 73

[3] ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2007-2013 թթ., Ստեփանակերտ, 2014, էջ 90.

նույն ցուցանիշը 2013թ. ընթացքում նվազել է մինչև 22 170.5 հազար դրամ, ինչը վկայում է այն փաստի մասին, որ 2013թ. ԼՂՀ տարածք տեղափոխված ընտանիքների քանակը նվազել է: Հիմնական բնակություն հաստատելու համար 2013թ. ՀՀ-ից և այլ երկրներից ԼՂՀ են տեղափոխվել 59 ընտանիք, ընդհանուր առմամբ՝ 216 անդամ, այն դեպքում, երբ 2012 թ.-ին այս ցուցանիշը գրեթե երկու անգամ բարձր էր՝ 114 ընտանիք, 414 մարդ թվաքանակով:

ԼՂՀ-ում 2013թ. պաշտոնապես հաշվառված եկողների թվաքանակը կազմել է 866 մարդ, ընդ որում ՀՀ-ից՝ 779 մարդ, ԱՊՀ անդամ մյուս երկրներից, Սիրիայից և այլ երկրներից՝ 87 մարդ: Մեկնողների թվաքանակը նույն ժամանակահատվածում կազմել է 554 մարդ , ընդ որում 522-ը մեկնել է ՀՀ, 32-ը ԱՊՀ անդամ մյուս երկրներ և այլ երկրներ: Մեխանիկական հավելաճը կազմել է 312 մարդ:

Եկողների և մեկնողների դինամիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ է կազմում Ստեփանակերտի և Քաշաթաղի միգրանտների քիվը: Այսպես. եթե 2012թ. Ստեփանակերտ եկողների թիվը կազմում էր 132 մարդ, ապա 2013թ. այն կազմել էր 145 մարդ, մեկնողների թվաքանակը գրեթե չի փոխվել: Եթե 2012թ. այն կազմել է 154 մարդ, ապա 2013թ.՝ 151 մարդ: Քաշաթաղում վիճակը այլ է , այստեղ նվազում է եկողների և ավելանում մեկնողների թիվը: Այսպես. 2012թ. եկողների թիվը կազմում էր 401 մարդ, իսկ 2013թ. այն կազմել էր 393 մարդ: Միևնույն ժամանակ մեկնողների թվաքանակը 2012թ.-ին կազմում էր 169 մարդ, իսկ 2013թ.՝ 173մարդ:

Հավելված 1,2 :

Գծապատկեր 1 Եկողների և մեկնողների դինամիկան



Գծապատկերի ուսումնասիրությունը վկայում է, որ վերջին հինգ տարվա ցուցանիշներով 2013թ. եկողների թվաքանակը ամենա ցածրն է:

Աշխատուժի արտահոսքի սոցիալ-տնտեսական և այլ հետևանքները արդեն հայտնի են, սակայն ներպետական միգրացիան իր հերթին խորացնում է դրանք և տեղիք տալիս այլ բացասական հետևանքների: Գյուղական բնակչության կենտրոնացումը քաղաքներում մեծ տնտեսական կորուստներ է առաջացնում գյուղատնտեսության ոլորտում: Ներքին միգրացիան տանում է աշխատատեղերի բացակայությանը, ինչպես նաև արտաքին միգրացիայի աճին: Եվ այն փաստը, որ այսօր մեր հանրապետությունում քաղաքային բնակչության թվաքանակը գերազանցում է գյուղականին, արդեն իսկ վկայում է ներքին միգրացիայի տեմպերի աճի մասին: ԼՂՀ բնակչության թվաքանակի ցուցանիշն ընթացիկ հաշվարմամբ 2014թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 148140 մարդ, այդ թվում քաղաքային բնակչությունը՝ 79 161 մարդ, իսկ գյուղականը՝ 68 979մարդ: 2013թ. հունվարի 1-ի համեմատ բնակչության թվաքանակը ավելացել է 1492 մարդով՝ կազմելով 14466 մարդ, որից քաղաքայինը 77.8 մարդ , իսկ գյուղականը 68.8մարդ: Իհարկե 1492 մարդով աճը դեռևս չի նշանակում, թե այսօր հանրապետությունում առկա բնակչության թիվը բավարարում է երկրի զարգացման պահանջներին: Այստեղ ավելի մեծ անհանգստություն է պատճառում գյուղական բնակիչների թվաքանակի կրճատումը:

Ստեղծված իրավիճակից ելնելով հանրապետությունում պետական աջակցությունը պետք է ուղղել սոցիալ-տնտեսական քաղաքականության կատարելագործման վրա:

Այսպիսով, աշխատուժի արտագաղթի անցանկանալի ժողովրդագրական հետևանքները բավականին շատ են, ուստի ԼՂՀ կառավարությունը ավելի ակտիվ գործունեություն պետք է ծավալի բնակչության միգրացիայի պետական կարգավորման ուղղությամբ, մասնավորապես՝

- բնակչության զբաղվածության պետական քաղաքականության կարևոր խնդրիներից են աշխատանքի վարձատրության բնագավառում ճիշտ և ճկուն քաղաքականության իրականացումը, նվազագույն աշխատավարձի չափի ճիշտ սահմանումը և բիզնեսի համար նպաստավոր պայմանների ստեղծումն ու խրախուսման մեխանիզմների մշակումը, ազատ աշխատուժի արտահանման պետական կարգավորումը,
- այսօր, ինչպես երբևէ, անհրաժեշտ է կատարել համապատասխան աշխատանքներ ճիշտ քաղաքականություն մշակելու համար, քանի որ աշխատուժի արտագաղթի ազդեցությունը կզգացվի տարիներ հետո: Դրա հետևանքով կրճատվում է ոչ միայն բնակչության թվաքանակը արտադրության բնագավառում, այլև նվազում է երեխաների ծնունդը, իջնում բնական աճը, որոնք ազգային անվտանգության կարևոր հիմնախնդիրներն են,
- անհրաժեշտ է խթանել նոր աշխատատեղերի ավելացումն ու աշխատանքի արդյունավետ օգտագործումը, նոր աշխատատեղերի ստեղծման և արտադրության ընդլայնման նպատակով տրամադրել ցածր տոկոսադրույքով վարկեր,
- հարկային արտոնություններ սահմանել այն կազմակերպությունների համար, որոնք լրացուցիչ նոր աշխատատեղեր են բացում՝ իրենց վրա վերցնելով աշխատողների վերապատրաստման ծախսերը, օժանդակել այն կազմակերպություններին, որոնք զգալի ներդրումներ են կատարում մարդկային կապիտալում,
- աշխատուժի շարժի կարգավորման նպատակով անհրաժեշտ է ապահովել օրենսդրական դաշտի, միգրացիայի, արտագնա աշխատանքային գործունեության մասին օրենքների լրիվ ձևավորումը,
- խիստ կարևոր է զբաղվածության ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործումը, ֆինանսական լծակների և հատկապես հարկային, վարկային ճկուն քաղաքականության մշակումն ու ներդրումը, ֆինանսական պատժամիջոցների և պետական անհատույց դրամական օժանդակության կիրառումը:

Գրականություն

1. Վ.Ե. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին:, Երևան, 2001.
2. Ռ.Ս. Ղանթարյան ՀՀ աշխատանքի շուկան և զբաղվածության պետական կարգավորումը: «Տնտեսագետ», Երևան, 2003.
3. Ս.Ա. Մելքումյան «Հայաստանի հանրապետության և Լեռնային Ղարաբաղի հանրապետության տնտեսական աշխարհագրություն» Երևան, 2000.
4. Ս. Պողոսյան Աշխատանքի տնտեսագիտություն:, Երևան , 2004.
5. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2007-2013 թթ., Ստեփանակերտ, 2014.
6. Экономика и социология труда. Юнита 1., М. 2000г.

Հավելված 1

Եկողների, մեկնողների և մեխանիկական հավելաճի դինամիկան / մարդ/

	2012թ.			2013թ.			Բացարձակ աճ, նվազումը («-» նշանով)		
	եկողներ	մեկնողներ	մեխանի-կական հավելաճ	եկողներ	մեկնողներ	մեխանի-կական հավելաճ	եկողներ	մեկնողներ	մեխանի-կական հավելաճ
Ընդամենը	**907**	**574**	**333**	**866**	**554**	**312**	**-41**	**-20**	**-21**
Ք.Ստեփան ակերտ	132	154	-22	145	151	-6	13	-3	16
Ասկերան	58	32	26	49	33	16	-9	1	-10
Հադրութ	63	31	32	60	27	33	-3	-4	1
Մարտակերտ	75	66	9	80	37	43	5	-29	34
Մարտունի	51	45	6	64	51	13	13	6	7
Շահումյան	77	53	24	36	46	-10	-41	-7	-34
Շուշի	50	24	26	39	36	3	-11	12	-23
Քաշաթաղ	401	169	232	393	173	220	-8	4	-12

Հավելված 2

ԼՂՀ աշխատուժի շարժի իրավիճակը վերջին հինգ տարվա կտրվածքով

	2009թ.		2010թ.		2011թ.		2012թ.		2013թ.	
	մարդ	1000 բնակչի հաշվով	մարդ	1000 բնակչի հաշվով	մարդ	1000 բնակչի հաշվով	մարդ	1000 բնակչի հաշվով	մարդ	1000 բնակչի հաշվով
Եկողներ	914	6.5	1011	7.0	1109	7.7	907	6.2	866	5.8
Մեկնողներ	403	2.9	446	3.1	663	4.6	574	3.9	554	3.7
Միգրացիայի մնացորդ (+;-)	511	3.6	565	3.9	446	3.1	333	2.3	312	2.1

Տեղեկություններ հեղինակի մասին.

Արմիդա Հայրապետյան - Տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դասախոս

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը: